

**Գ Ի Ր**  
**ՕՐԵՆՈՒԹԵԱՆ ԵԽ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ**  
**ԱՌ ՎԱՐԴԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ ԲԱԼՈՅԵԱՆ**

Ուրախութեամբ կը տեղեկանաք որ տարւոյս Յուլիս 4ին պիտի նշուի ձեր  
ծննդեան 95-րդ տարեդարձը:

Կեանքի հանգրուան մը, զոր շատ քիչեր կ'արժանանան ողջունել: Մանաւանդ  
երր նկատի առնենք որ ձեր կեանքը խաղաղ, հանգիստ եւ անդորր կեանք մը չէ  
եղած. ձեզի նման բազմահազար ազգակիցներու հետ ցաւ, տառապանք եւ աքսոր  
ճաշակած էք: Բայց ապրած էք հաւատքով եւ ապագայի վառ յոյսերով: Եւ ահա  
այս է որ մեր դամբճները չկրցան տեսնել եւ ըմբռնել, եւ այդ պատճառով չկրցան  
սպաննել մեր ժողովուրդի հոգիին մէջ: Ապրեցա՞ւ Հայը, կ'ապրի՞ Հայը, պիտի  
ապրի՞ Հայը, եւ ո՞չ մէկ ուժ կրնայ իր հոգիին խլել իր հաւատքն ու  
աւանդութիւնները, իր մշակոյթն ու սրբութիւնները: Եւ դուք ապրող վկան էք այս  
հաստատումին:

Որպէս Առաջնորդ Ամերիկայի Հայոց Արեւելեան թեմին՝ կը շնորհաւորենք ձեր  
ծննդեան 95-րդ տարեդարձը: Կ'օյննենք ձեզ եւ կը գնահատենք ձեր եկեղեցանուէր  
ու ազգանուէր ծառայութիւնները, եւ կ'աղօթենք որ Տէրը իր շնորհներով զարդարէ  
ձեր ու ձեր հարազատներուն կեանքի օրերը:

Միրոյ ողջունի



ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Յուլիս 15, 1988

Սուրբ Գրիգոր Լուսատորիչ Եկեղեցի Հայաստանեաց  
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711

Մայիս 24, 1988  
Շիքակօ, հլլինոյ

Գերաշնորհ


Տէր Թորգոմ Սրբազն Արքեպիսկոպոս Մանուկեան  
Առաջնորդ Արեւելեան Թեմի, Միացեալ Նահանգաց Աներիկայի  
Նիւ Եօրք, Նիւ Եօրք.

Սրբազն Հայր,

Ներկայիւս կուգամ ինդրել Զեզմէ գնահատական գիր մը, շնորհուած  
Ս. Եկեղեցւոյս հաւատարիմ անդամներէն, Վարդան Մարտիրոս Բալոյեանի  
որուն 95րդ. տարեդարձը պիտի տօնուի Յուլիս 4, 1988 ին.

Վարդան Մարտիրոս Բալոյեան ծնած է 1898 ին Սեբաստիա. Ամերիկա  
եկած է 1913 ին, ան կը պատկանի այն սերունդին որ ճաշակեց մեծ եղեռնի  
դառնութիւնները: Վարդան Մարտիրոս Բալոյեան բարի եւ օրինակելի անձ մըն է,  
իր այս յառաջացած տարիքին մէջ իսկ յաճախ Եկեղեցի կուգայ, վստահ եմ որ  
մեծապէս պիտի ուրախացնէ զինքը, Զերդ Սրբազնութեանէն ստացուած նամակ մը:  
Խորին շնորհակալութեամբ:

Մատչելով ի Համբոյր Զերդ Ս. Աջոյն

  
Վարդան Բալոյան Հազարեան

յուլ 5/7